ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 24/7

25 ապրիլի 2017թ.

Քննարկվեց «ԲԱՍԽ» ՍՊԸ ներկայացուցչի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 14.03.2017թ. թիվ 2137625 ակտի դեմ:

«ԲԱՍԽ» ՍՊԸ ներկայացուցչի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետը 15.02.2017թ. կայացրել է թիվ 2137625 հանձնարարագիրը, որով հանձնարարվել է Կոտայքի ՏՀՏ աշխատակիցներին «ԲԱՍԽ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև՝ Ընկերություն) իրականացնել աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Ընդ որում, որպես «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջի կատարում, ստուգման ակտում ստուգվող ժամանակաշրջան է սահմանվել 18.02.2017թ. մինչև 28.02.2017թ.: Ստուգման ավարտի կապակցությամբ ևս հանձնարարագրում տրվել է կոնկրետացում, այն է՝ ստուգման ժամկետ է սահմանվել 10 օր:

Ստուգման արդյունքում 03.03.2017թ. կազմվել է թիվ 2137625 ակտի նախագիծը, իսկ 14.03.2017թ. ակտը, որով Ընկերությանն առաջադրվել է 2.400.000 ՀՀ դրամ գումարի չափով վճարման ենթակա եկամտային հարկի գումար:

Ակտում ներկայացված խախտումները չեն համապատասխանում իրականությանը, առկա է օրենքի սխալ կիրառում, օրենքով նախատեսված կարգով նկարագրված չեն Ընկերությանը վերագրվող խախտումները:

Ստուգում իրականացնող պաշտոնատար անձինք ստուգման համար ունենալով 10 աշխատանքային օր ժամկետ, սակայն ստուգումը հապշտապ կերպով 5 աշխատանքային օրում ավարտելով չեն իրականացրել փաստերի, տեղեկությունների համակողմանի քննարկում և ստուգման անցկացման ու փաստաթղթավորման ժամանակ թույլ են տվել վարչարարական ու նյութաիրավական բացթողումներ ու խախտումներ:

Ակտի 1-ին մասը շարադրվել է հիմք ընդունելով այն հանգամանքը, որ իբր Ընկերությանը պատկանող գ.Ջրվեժ հասցեում գտնվող հանդիսությունների սրահում աշխատանքային գործունեություն էին իրականացնում թվով 16 վարձու աշխատողներ, որոնցից թվով 8 աշխատակիցների հետ կնքված չէին գրավոր աշխատանքային պայմանագրեր և բացակայում էին օրենքով սահմանված իրավական ակտերը, որով խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին կետի և 85-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները:

Նախ և առաջ հարկ է նշել, որ Ընկերության տնօրենի կողմից գրված հայտարարության մեջ հստակ նշված է, որ ստուգման պահին Ընկերության հանդիսությունների սրահում աշխատում են թվով 20 աշխատողներ, որոնցից 8 աշխատողները գրանցված աշխատողներ են, իսկ մնացած 12 աշխատողները հրավիրված էին տվյալ օրվա համար կազմակերպված միջոցառմանը համապատասխան ծառայություններ մատուցելու համար: Նաև նշենք, որ նման հանդիսություններ կարող են լինել տարին 1 կամ 2 անգամ, երբ հրավիրվում են լրացուցիչ աշխատակիցներ և բացի այդ վերջիններիս հետ կնքված են եղել ծառայությունների մատուցման պայմանագրեր,

սակայն դրանք չեն ներկայացվել ստուգողներին՝ վերջիններիս կողմից այդպիսիք չպահանջվելու կապակցությամբ:

Անհասկանալի է Ակտում նշված 8 աշխատողների հետ աշխատանքային պայմանագրեր չլինելու փաստը, այնինչ նրանք եղել են 12 հոգի, որի մասին Ընկերության տնօրենի կողմից տրված հայտարարության մեջ նշված է:

Հաշվի առնելով վերոգրյալ պատճառաբանություններն առ այն, որ Ընկերությունը չի խախտել Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, որպիսի պայմաններում Ընկերության կողմից աշխատողների աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստը պատասխանողի կողմից չի հիմնավորվել, ուստի «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով առաջնորդվելը վարչական մարմնի կողմից կատարվել է ոչ իրավաչափ և անհիմն կերպով: Ավելին՝ նշված հոդվածից հետևում է, որ անգամ խախտման պարագայում ստուգման ակտում այս հոդվածին հղում կատարելով, հաշվարկելով և վճարման առաջադրելով որևէ գումար՝ վարչական մարմինը դուրս է եկել իր իրավասության շրջանակներից:

Տեսչությունը չի իրականացրել իրավաչափ, օրինական, բազմակողմանի և օբյեկտիվ վարչարարություն, որի շրջանակներում պարտավոր էր ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ Ընկերության օգտին առկա հանգամանքները:

ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գործատուն իրավունք ունի ինքնուրույն, ուղղակիորեն (առանց մրցութային կամ այլ ընթացակարգերի) համալրելու թափուր կամ նոր ստեղծված աշխատատեղերը՝ կնքելով սույն օրենսգրքով նախատեսված աշխատանքային պայմանագրեր: Աշխատող փնտրող գործատուն կարող է թափուր կամ նոր ստեղծված աշխատատեղերը համալրել նաև իր կազմակերպած մրցույթով կամ օգտվել համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների ծառայություններից: Թափուր աշխատատեղերի համալրման նպատակով մրցույթի կազմակերպման և անցկացման, ինչպես նաև մրցույթում հաղթած անձանց հետ աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանում է գործատուն:

Գանգատում բերված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 46-րդ, 8-րդ, 37-րդ և 69-րդ հոդվածների դրույթները:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ կողմից 14.03.2017թ. կայացված թիվ 2137625 ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձ՛նաժողովը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի 15.02.2017թ. թիվ 2137625 հանձնարարագրի համաձայն «ԲԱՍԽ» ՍՊԸ-ում կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 14.03.2017թ. թիվ 2137625 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել 2.400.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ «ԲԱՍԽ» ՍՊԸ-ին պատկանող գ.Ջրվեժ հասցեում գործող հանդիսությունների սրահում աշխատանքային գործունեություն իրականացնող վարձու աշխատողներից թվով 8 հետ կնքված չէին գրավոր աշխատանքային պայմանագրեր, ինչպես նաև բացակայում էին այդ անձանց վերաբերյալ օրենքով սահմանված անհատական իրավական ակտերը: Նշված փաստի վերաբերյալ 18.02.2017թ. կազմվել է ՀՀ կառավարության 25.07.2013թ. թիվ 1259-Ն որոշման N2 հավելվածով սահմանված արձանագրությունը: Արդյունքում ղեկավարվելով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով կիրառվել է նույն մասով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ գումարով 2.400.000 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԲԱՍԽ» ՍՊԸ-ում աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգումը փաստացի սկսվել է 18.02.2017թ., ինչի մասին ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի 15.02.2017թ. թիվ 2137625 հանձնարարագրի դարձերեսին առկա է համապատասխան գրառում:

Ստուգման ընթացքում՝ 18.02.2017թ., ընկերության տնօրեն Վահան Բաղդասարյանը տվել է գրավոր հայտարարություն, որում մասնավորապես նշել է, որ տվյալ պահին աշխատանքային գործունեություն են իրականացնում թվով 20 մարդ, որից 8-ը գրանցված աշխատողներ են, իսկ մնացած 12 աշխատակիցներ հրավիրված են աշխատանքի հանդիսությունների ժամանակ: Վահան Բաղդասարյանը հայտարարությունում նշել է նաև, որ այն գրված է իր ձեռքով, ճիշտ է, որի համար ստորագրում է:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ ընկերության տնօրենն իր գրավոր հայտարարությունում նշում է, որ միայն թվով 8 աշխատակիցներն են հանդիսանում գրանցված, մնացած աշխատակիցները գրանցված լինելու մասին հայտարարությունում որևէ բան նշված չէ:

Բացի այդ, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք, ընկերության տնօրենի մասնակցությամբ, 18.02.2017թ. կազմել են գրավոր արձանագրություն, որում մասնավորապես նշվել է, որ թվով 8 վարձու աշխատողների հետ կնքված է գրավոր աշխատանքային պայմանագրեր, իսկ մնացած թվով 12 վարձու աշխատակիցների հետ կնքված գրավոր աշխատանքային պայմանագրեր առկա չեն: Արձանագրությունում նշված է նաև, որ ըստ տնօրենի հայտարարության պայմանագրեր կնքված չեն, քանի որ աշխատակիցները հրավիրվում են՝ կախված հանդիսությունների հաճախականությունից և հյուրերի քանակից: Արձանագրությունը ստորագրված է ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց, ինչպես նաև ընկերության տնօրենի կողմից:

Տվյալ դեպքում հարկ է նկատել, որ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից կազմված արձանագրությունում հստակ նշվել է թվով 12 վարձու աշխատակիցների հետ գրավոր աշխատանքային պայմանագրեր կնքված չլինելու մասին, ինչը հաստատել է նաև ընկերության տնօրենը:

Վերոգրյալից հետևում է, որ գանգատում բերված այն պնդումները, որ թվով 12 վարձու աշխատակիցների հետ կնքված են եղել ծառայությունների մատուցման պայմանագրեր, սակայն դրանք չեն ներկայացվել ստուգողներին՝ վերջիններիս կողմից այդպիսիք չպահանջվելու կապակցությամբ, հիմնավոր չեն և չեն համապատասխանում իրականությանը:

Հանձնաժողովը գտնում է, որ գործում առկա ապացույցները հիմնավորում են, որ ստուգմամբ արձանագրված աշխատակիցների կողմից իրականացվել է աշխատանքային գործունեություն, սակայն նրանց հետ սահմանված կարգով գրավոր աշխատանքային

պայմանագրեր կնքված չեն եղել և ստուգման ընթացքում չեն ներկայացվել: Ավելին, նշված աշխատակիցների հետ աշխատանքային պայմանագրերը, ըստ էության, կնքված չեն եղել նաև 03.04.2017թ. դրությամբ, երբ ներկայացվել է սույն գանգատը, հակառակ դեպքում դրանք Հանձնաժողովին կներկայացվեին ոչ թե 25.04.2017թ. գրությամբ, այլ՝ 03.04.2017թ., գանգատի հետ միասին:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստը լիազոր մարմնի կողմից ՀՀ կառավարության սահմանած կարգով արձանագրվելու դեպքում գործատուն (այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված և արտոնագրային վճար վճարող չհանդիսացող) տվյալ (արձանագրման) ամսում յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկում և վճարում է եկամտային հարկ:

Քննարկվող դեպքում չնայած այն հանգամանքին, որ ստուգման ընթացքում ձեռք բերված ապացույցներով հիմնավորվել է թվով 12 աշխատակիցների կողմից առանց ընկերության հետ սահմանված կարգով աշխատանքային պայմանագրեր կնքելու փաստացի աշխատանքային գործունեություն իրականացնելու փաստը, սակայն հաշվի առնելով, որ նշված խախտումը ՀՀ կառավարության սահմանած կարգով հնարավոր է եղել արձանագրել միայն թվով 8 աշխատակիցների մասով, ուստի «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառվել է միայն թվով 8 աշխատակիցների մասով: Մասնավորապես, թվով 8 աշխատակիցների մասով 18.02.2017թ. կազմվել է ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 1259-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված արձանագրությունը, որը հանդիսանում է Ակտի անբաժանելի մասը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ իրականացված ստուգմամբ հիմնավորվել է թվով 8 աշխատակիցների աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր ձևակերպված չլինելու փաստը, որի համար Ակտով կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան պատասխանատվության միջոցը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 14.03.2017թ. թիվ 2137625 ակտը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ **Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**